# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 30

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում առանձնացվել Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող մի շարք հողամասեր: Առանձնացված հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում: Հողամասերի օտարում չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14 հունվարի 2010թ. ,,ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին,, թիվ 16-Ն որոշման դրույթները անհրաժեշտություն է առաջացել տալ համաձայնություն վերոնշյալ հողամասերը օտարելու նպատակով.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքի վարչական սահմաններում ընդգրկված ՀՀ սեփականություն հանդիսացող 0.16հա մակերեսով և 11-001-0238-0052 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը օտարելուն համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքի վարչական սահմաններում ընդգրկված ՀՀ սեփականություն հանդիսացող 0.2855հա մակերեսով և 11-001-0233-0023 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը օտարելուն համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքի վարչական սահմաններում ընդգրկված ՀՀ սեփականություն հանդիսացող 0.3066հա մակերեսով և 11-001-0233-0022 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը օտարելուն համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Ենոքավան բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված ՀՀ սեփականություն հանդիսացող 2.6հա մակերեսով և 11-001-0323-0025 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասը օտարելուն համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքի վարչական սահմաններում ընդգրկված ՀՀ սեփականություն հանդիսացող 0.0098հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային, տրանսպորտի գործառնական նշանակության հողամասը օտարելուն համայնքի ղեկավարի առաջարկությանը:

6. Տալ համաձայնություն՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքի Սպանդարյան փողոցում գտնվող, ՀՀ սեփականություն հանդիսացող 0.069հա մակերեսով բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը օտարելուն համայնքի ղեկավարի առաջարկությանը:

| Կողմ -17 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ | | ԱԹԱԲԵԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ |
| ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ | | |
| ԲՈՒՂԴԱՐՅԱՆ ՄՀԵՐ | | |
| ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ | | |
| ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ԽՈՐԵՆ | | |
| ԾՈՎԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ՀԱՄԶՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | |
| ՂԱԶՈՒՄՅԱՆ ՄԱՆԵ | | |
| ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ | | |
| ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ՄԵՀՐԱԲՅԱՆ ԱՆՈՒՇ | | |
| ՉԱՊՈՒԽՅԱՆ ԳԱԳԻԿ | | |
| ՊԵՏՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ | | |
| ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ | | |
| ՍԱՐՀԱՏՅԱՆ ՍՏԵՓԱՆ | | |
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | |
| ՎԱՐՇԱՄՅԱՆ ՎԱՀԵ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**